Արձանագրություն N 3

«55ԴՊ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 16 **«08» «08» 2018թ**
ժ.14:30

<u>Մասնակցում էին՝</u>
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Ավագյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Մարտիրոսյանը, Ս. Նասխուլյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(*Է. Ավագյան*)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին, 03.08.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:
- 03.08.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-Ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 07.08.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			**Մասնակցի հայտի գնահատման արդյունքները**
			Մասնակցի անվանումը
			«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	«Մասնագիտական փորձառության» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
3	«Ֆինանսական միջոցներ» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
4	«Տեխնիկական միջոցներ» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
5	«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին
(Է. Ավագյան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

Ընտրված մասնակից ճանաչել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին,

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Ավագյան
Անդամներ՝		Լ. Մարտիրոսյան
		Ս. Նասխուլյան
Քարտուղար՝		Հ. Ղազարյան